

ՑԱՎ Ի ՍԻՐՏ

Վերջին չորս տասնամյակների ընթացքում առաջին անգամն է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայաստան աշխարհը, ավելի ճիշտ կլիներ ասել՝ համայն հայ ժողովուրդը, որ ի Հայաստան, յԱրցախ և ի սփյուռս աշխարհի, Ամանորը և Սուրբ Ծնունդը տոնախմբում է ... առանց Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայության: Մայր Աթոռում կարծես ավանդույթ էր դարձել՝ յուրաքանչյուր տարեսկզբի առաջին շաբաթվա, այսինքն՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնակատարությունների ընթացքում, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից մեզ ավանդված «հացն ու գինին», ըմբոշխնել և որպես պատգամ ու անկորնչելի ավանդություն ընդունել Վեհափառ Հայրապետի լուսառատ խոսքերը, նրա տասնամյակների կենսափորձից բխած իմաստնացած հորդորները և ամենակարևորը՝ նրա հայրական խրատներն ու օրհնությունները:

Մեր ազգի 130 կաթողիկոսներից յուրաքանչյուրի գործունեության մեջ հիմնականը և ամենից կարևորը եղել է՝ նպաստելն ու հավերժ պահպանելը հայ ժողովրդի գոյության... իր բազում և բազմապիսի փորձություններով լի ճանապարհին, բարձր պահել նրա քրիստոնեական հոգու անաղարտությունը և ազգային արժանապատվության զգոնությունն ու ազգապահպանության մարտական ոգին:

Եկեք շատ հեռու չգնանք և, պարփակվելով 17 տասնամյակների շրջանակներում, մի փոքր վերհիշենք մեր անմահ Կաթողիկոսների՝ մեզ որպես պատգամ ավանդված ազգանվեր գործունեությունից:

Ի նպաստ ազգապահպանության գործի, Ներսես Աշտարակեցի Կաթողիկոսի միակ և հիմնական մտահոգությունն էր՝ Հայաստանը զերծ պահել օտար ոտնձգություններից: Իրողության պահանջին համապատասխան և ի հեճուկս թշնամյաց, Ներսես Աշտարակեցի Կաթողիկոսի աջ ձեռքի՝ Քրիս-

տոսի խաչը երբեմն-երբեմն վերափոխվում էր հատու արի՝ մաքրելու Հայաստանի արյունաթաթախ սրբացած հողը բարբարոս ցեղերից:

Տ. Տ. Մկրտիչ Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Ամենայն Հայոց Հայրիկը, նպատակամղված էր հային տեսնել աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների ընթացքին համաքայլ, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Տաճկահայաստանը, ինքնավար իրավունքներ ձեռք բերած:

Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու գոյությանն սպառնացող ամենադժնդակ և ողբերգական ժամանակահատվածում քաջությունն ու համարձակությունն ունեցավ իր կորովի գործունեությամբ սատար կանգնել մեր ժողովրդի հոգևոր և աշխարհիկ գոյության միասնականությանը: Ինչո՞ւ եմ ասում Հայ Եկեղեցու համար ամենադժնդակ և ողբերգական ժամանակահատվածում, միայն նրա համար, որ մեր ժողովրդի պատմության նախորդ շրջաններում հայ ժողովրդի գոյությանն սպառնում էին օտար բարբարոս ցեղերը, ապա այս ընթացքում «ցեցերը» մեր ժողովրդի ներսում էին և ավելի վտանգավոր ու սպառնալից:

Գալով Տ. Տ. Գևորգ Զ Չորեքչյան Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ապա համարձակորեն և լիահունչ պետք է ասել, որ նրա օրոք հիմք դրվեց մեր ժողովրդի ազգային և հոգևոր գոյության զարթոնքին: Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Հայրապետը ամենադուլզն չափով իսկ ջանք ու եռանդ չխնայեց՝ մեր ժողովրդի ազգային և հոգևոր գոյության զարթոնքը օրինականացնելու գործում: Եվ այդ ծանրագույն գործը նրան լիարժեք կերպով հաջողվեց:

Մեր ժողովրդի պատմության այս փոքրիկ էքսկուրսը արվեց միայն նրա համար, որպեսզի պարզ պատկերացում կազմենք մեր նախորդ Կաթողիկոսների հիմնական գործունեության մասին, որով որ նրանք մտահոգված էին և ազգային ու եկեղեցական տոնակատարությունների ընթացքում հաճախ էին անդրադառնում այդ խնդրին:

Իսկ մեր ամենաթարմ հիշողությունները կապված են նորոգ հանգուցյալ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, որի բոլորանվեր նվիրվածությունը մեր ազգին անուրանալի է: Եթե նախորդ Կաթողիկոսների հիմնական գործունեությունը սահմանափակվում էր այս կամ այն հարցի լուծմամբ (Հայաստանը մաքրել օտար ոտնձգություններից, Արևմտահայաստանը տեսնել ինքնավար իրավունքներով, վերացրած տեսնել ազգին և Եկեղեցուն սպառնացող վտանգը և հայ ժողովրդի ազգային ու հոգևոր զարթոնքը օրինականացնելու գործընթացի մեջ դնել), ապա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 130-րդ Կաթողիկոսի ազգային և եկեղեցական մտահոգությունները բազմաթիվ էին (Հայ Եկեղեցու զարթոնքի ծաղկում, եկեղեցաշինություն և այլ շինարարական գործունեություն, Հայկական Հարց, Արցախի խնդիր...): Մեր ազգին հուզող վերջին այս երկու հարցերով Նորին Սուրբ Օծությունը իր հուժկու ձայնը բարձրացրեց արդեն միջազգային ասպարեզներում: Եվ արդյունքը... արդյունքը խիստ շոշափելի է. մեր ժողովրդի ռազմական ու քաղաքական անուրանալի հաղթանակները:

...Ահա այս խոհերն են, որ դարեդար փոխանցվում են սերնդե-սերունդ, այս խոհերն են, որ մշտապես մտահոգում են մեր Կաթողիկոսներին, այս

խոհերի մասին է, որ մենք միշտ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնակատարությունների ընթացքում Ս. Էջմիածնի Մայր տաճարի Իջման Սուրբ Սեղանից կամ այլ բեմերից լսում և նորոգվում ենք ու... պատրաստվում փոխանցել այն հաջորդ սերունդներին:

Սակայն այսօր, ցավոք սրտի, ազգային-եկեղեցական այս երկու տոները մենք ստիպված նշում ենք առանց Վեհափառ Հոր, առանց նրա՝ մեզ համար այնքա՜ն դաստիարակիչ և սնուցիչ խոհերի:

«Ուղիղ են պատգամք Տեառն, եւ ամենայն գործք նորա հաւատովք են» (Սաղմոս ԼԲ 4):

ՎԱԼՈՒԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ